ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2020թ. թիվ 1074-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 11.12.2020թ. N 01//7257-2020 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2021 թվականի հունվարի 29-ը սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի համաձայն մշակել, Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համաձայնեցնել ու հաստատել համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2021 թվականի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանը:

2) մինչև 2021 թվականի դեկտեմբերի 14-ը Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման համաձայն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում ընդգրկված պետական կառավարման համակարգի մարմինների (բացառությամբ Պաշտպանության նախարարության և Վարչապետին առընթեր Ազգային անվտանգության ծառայության) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում

գործող տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 14-ը Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման համաձայն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

5. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

12/11/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 11
ք.Վանաձոր